«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Բնօրինակից նկարչության դասավանդման իմ փորձից

Առարկա՝ Կերպարվեստ

Ուսուցիչ՝ Սուսան Պապոյան

Դպրոց՝ Մյասնիկյանի Արայի անվան միջն դպրոց

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Բնանկարի ուսուցումը միջին դպրոցում……3

Եզրակացություն……14

Գրականության ցան……15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնանկարչությունը կերպարվեստի ինքնուրույն ժանր է, այն կարևոր դեր ունի պատմական նկարներում և գեղեցիկ համադրմամբ ներկայացվում է նաև այլ ժանրերում:

Բնանկարը բնության ձևերի և երևույթների, լույսի, օդի, տարածության գեղարվեստական արտացոլումն է՝ պայմանավորված հեղինակի աշխարհայացքով, մքերով և զգացմունքներով:

Բնանկարի տեսքը կախված է այն բանից, թե ինչի վրա է կենտրոնացված նկարչի ուշադրությունը: Բնանկարչությունը օգնում է ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնել դիտողականությունը, ձևավորել ստեղծագործական և տրամաբանական մտածողությունը, ինչպես նաև սերմանում է սեր հայրենիքի նկատմամբ:

Թեման ձևավորում է գիտելիք արվեստի տեսակների վերաբերյալ և զարգացնում է գեղագիտական ճաշակը:

Բնությունը հրաշալի դպրոց է, որտեղ իրականացվող ուսումնական գործունեությունը դառնում է ավելի գրավիչ, հետաքրքիր՝ սովորողներին տալով տրված թեմաներին կամ առաջադրանքներին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ, արժեքավոր նյութեր, դիտարկումներ, բազմապիսի հնարավորություններ:

Մարտիրոս Սարյան

ԲՆԱՆԿԱՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ



Մարտիրոս Սարյան

Բնանկարչությունը նման է տարերքի, գեղեցիկ է լեռները, անտառները, ծովը,արևը: Բնանկարչությունը օվկիանոս է ողողված դեղին լեռներով:

Միջին դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է: Ուսուցիչը ուսումնառության ընթացքում պետք է նպաստի անձի համակողմանի զարգացմանն ու դաստիարակությանը: Ձևավորի անձ և քաղաքացի, որը պետք գնահատի, սիրի և հոգատարություն ցուցաբերի բնության նկատմամբ, կարևորի բնության գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը:

Բնանկարի միջոցով անհրաժեշտ է ապահովել գեղարվեստական և գեղագիտական կողմը: Դիտման, ուսումնասիրման և կիրառման արդյունքում սովորողները հնարավորություն կունենան իրենց գիտելիքները հանձնել թղթին:

Բնանկարչությունը ինքնուրույն ժանր է ունի բազմաթիվ տեսակներ և առանձնահատկություններ:

Լինում է՝ բաց և փակ, բնական, քաղաքային, գյուղական և այլն:

Իվան Շիշկին

ԲՆԱԿԱՆ – բնանկարը պատկերում է տարվա տարբեր ժամանակների անտառների, դաշտերի, գետերի, բնական երևույթների տեսարան:

ՔԱՂԱՔԱՅԻՆ – բնանկարը բնակիչներով և տրանսպորտով բնակեցված փողոցների տեսարան է:

ԳՅՈՒՂԱԿԱՆ – բնանկարում փառաբանվում է բնության հետ մարդու միասնությունը, սերը հայրենի հողի նկատմամբ:

Դասի ընթացքում անհրաժեշտ է սովորողներին ցուցադրել հայտնի նկարիչների ստեղծագործություններ (Մինաս Ավետիսյան, Մարտիրոս Սարյան, Հովհաննես Այվազովսկի և այլն): Նկարներն ուսումնասիրելուց հետո պետք է համեմատել միմիանց հետ, նշել տարբերությունը, առանձնացնել գույները, ինչն էլ զարգացնում է տեսողական հիշողությունը, մտքի երևակայությունը:

Բնանկարչության մեջ կարևորությունը պետք է տալ լույսի և ստվերի առկայությանը, հորիզոնի գծին, գծային, գունային և օդային հեռանկարին, որպեսզի սովորողները տեսնեն նկարի խորությունն ու հեռավորությունը:





Անհրաժեշտ է սովորողների մոտ զարգացնել գունազգացողությունը, գունային ընկալումը, գունային երևակայությունը, խորացնել գեղագիտական գունային աշխարհընկալումը: Ուսումնասիրել գունային զուգորդումների ստեղծման հնարները գեղանկարչական պատկերներում: Գունային ընկալումը զարգացնելու նպատակով սովորողներին պետք է հնարավորություն տալ տարբեր նյութերով աշխատել, այդ պատճառով պետք է բացատրել նյութերի կիրառման տեխնիկան: Նյութերը բազմազան են ՝ ջրաներիկ, գուաշ, ածուխ, տուշ, յուղամատիտ և այլն:

ՋՐԱՆԵՐԿ – ջրաներկը թափանցիկ ներկանյութ է, հեշտությամբ լուծվում է ջրում: Աշխատելիս օգտագործում ենք փափուկ վրձիններ: Աշխատում ենք թեթև, որպեսզի չկորցնենք նկարի թափանցիկությունը:

ԳՈՒԱՇ – տարբերվում է կարծրությամբ, աշխատելիս օգտագործում ենք չոր վրձիններ: Գուաշով աշխատելիս վրձինը թեթև խոնավեցնում ենք:

Գունազգացողություն արթնացնելու նպատակով կարևոր է սովորողներին ներկայացնել արվեստի կարևոր ուղղություններից մեկի՝ ինպրեսիոնիզմի մասին: Ինպրեսիոնիզմը ծագել է Ֆրանսիական գեղանկարչության մեջ: Նկարիչները նկարում էին հաճախ ներկայացնելով միևնույն տեղը՝ տարբեր պահերից ու տարբեր կետերից: Իմպրեսիոնիզմը պլեների հետևողական կիրառումով ոչ միայն

սկզբունքային վերադարձ էր դեպի բնությունը, այլև ժամանակակից քաղաքի հակադրությունների, առօրյայի, հասարակ մարդու իրական ապրումների ու կեցության, նրան շրջապատող իրերի գեղեցկության նոր մեկնաբանում: Որպեսզի սովորողների մոտ տպավորիչ լինի գույների փոփոխությունը կարելի է հանձնարարել նկարել բնություն՝ օրվա տարբեր ժամերին՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան: Այդպիսի առաջադրանք կատարելիս սովորողները կբացահայտեն, կտպավորվեն բնության երևույթներնի և գույների փոփոխությամբ:

Կլոդ Մոնե. «Անձրևանոցով կինը»

Բնանկար թեման զարգացնող է, ամրապնդող և ճանաչողական: Մինչ բնանկարչական աշխատանքներ ստեղծելը, պետք է սովորողների հետ միասին դուրս

գալ բնության գիրկ, տարբեր դիտակետերից դիտարկումներ կատարել: Ուսումնասիրել բնությունն իր առանձնահատուկ գույներով՝ տարվա տարբեր եղանակներին: Ուսումնասիրել յուրաքանչյուր քար ու թուփ, հեռվում երևացող սարեր, առաջին և երկրորդ պլաններ, սովորեցնել ճիշտ տեսնել կոմպոզիցիոն կենտրոնը: Լսել բնության երաժշտությունը՝ թռչունների դայլայլը, տերևների խշխշոցը, ծառերի արձակած ձայները, խոտերի մեղմ խշշյունը: Բնանկար նկարելիս ցանկալի է աշխատել Վիվալդիի «Տարվա եղանակներ» երաժշտության ուղեկցությամբ: Այդպիսի մթնոլորտում ձևավորվում է սովորողների երաժշտական մտածողությունը: Դասապրոցեսի ընթացքում տարբեր առարկաների հետ միջառարկայական կապեր ստեղծելով կընդլայնվեն սովորողների գիտելիքները:

«ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի հետ միջառարկայական կապ ստեղծելով սովորողները կծանոթանան շրջակա բնությանը, դիտարկումների միջոցով կխորացնեն բնագիտական գիտելիքները: Սովորողների մոտ կձևավորվի սեր և հոգատարություն բնության նկատմամբ:

«ՄԱՅՐԵՆԻ» առարկայի հետ միջառարկայակն կապ ստեղծելով՝ սովորողները գրագետ խոսքով կներկայացնեն բնությունը, հայ գրողների ստեղծագործություններից բանաստեղծական մեջբերումներ կկատարեն: Սովորողների մոտ կզարգանա ստեղծագործական միտքն ու երևակայությունը:

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի հետ միջառարկայական կապ ստեղծելով սովորողները ունկնդիր կլինեն բնության ձայներին: Հանդես կգան բնության մասին իրենց սովորած երգերով: Կզարգանա միմյանց հետ համագործակցելու և հաղորդակցվելու կարողությունները:

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» առարկայի հետ միջառարկայական կապ ստեղծելով սովորողների մոտ կզարգանա տարածապատկերային մտածողությունը, երևակայությունն ու մտքի ճկունությունը:

Ժամանակակից գիտության բոլոր ճյուղերը սերտորեն կապված են, և դա պետք է արտահայտվի նաև դասավանդման ընթացքում:

ԲՆԱՆԿԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

ՆՊԱՏԱԿ

- Գեղեցիկի ընկալում
- Մեր արվեստի ստեղծագործության հանդեպ

- Հոգևոր արժեքների գնահատում
- Միջառարկայական կապի ստեղծում
- Գեղագիտական ճաշակի զարգացում

ԶԱՐԳԱՑՆԵԼ

- Երևակայությունը, ուշադրությունը, տարածապատկերային մտածողությունը:
- Գունազգացողությունը, դիտողականությունը:
- Ստեղծած նկարների բովանդակությունը գեղագիտորեն վերարտադրելու, ինքնուրույն ստեղծագործաբար աշխատելու, գեղեցիկը նկարելու և գնահատելու ունակությունները:
- Առաջադրանքների գծային, գունային կառուցվածքի, ձևի, ծավալի, հեռանկարի, լուսաստվերի, լուսաօդային միջավայրի ինքնուրույն վերլուծման և պատկերման կարողունակությունը:
- Սովորողների դիտողականության, բնության հետ ներդաշնակ շփվելու և հաղորդակցվելու, փոխօգնության և համագործակցության կարողունակությունների զարգացումը:

ՁԵՎԱՎՈՐԵԼ

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

- Սովորողները դատողություն կկատարեն բնության կարևորության մասին:
- Դատողություն կկատարեն բնության փոփոխությունների մասին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Վերլուծեն իրենց կատարած աշխատանքները:
- Վերլուծեն բնության փոփոխությունները:

ՈՐՈՇՈՒՄ

- Բնության մեջ ընտրեն իրենց հոգեհարազատ պատկերը:
- Անվանում տան իրենց կատարած աշխատանքին:

ԽՆԴԻՐՆԵՐ

- Սովորողները կուսումնասիրեն բնության գեղեցիկ բնապատկերները:
- Կուսումնասիրեն հորիզոնի գիծը, լույսն ու ստվերը, համաչափությունն ու հավասարակշռությունը:
- Ինքնուրույն կստեղծեն գունային համադրություններ:

- Կուսումնասիրեն բնություն գունային փոփոխությունները օրվա տարբեր ժամերի:
- Տեղեկացված կլինեն իմպրեսիոնիզմ ուղղության մասին:
- Կուսումնասիրեն հայտնի նկարիչների ստեղծագործություններ:
- Սովորողները համեմատություններ, նմանություններ և տարբերություններ կգնեն նկարիչների ստեղծագործություններում:
- Դիտումների և ստացած գիտելիքների հիման վրա կստեղծեն բնանկարներ, որտեղ կզարգացնեն լուսաստվերի, գույների, տոների ճիշտ հարաբերակցությունը հաղորդելու, ինքնուրույն կոմպոզիցիա ստեղծելու ունակությունը:
- Կկարողանան բնանկարի աշխատանքներում ճշտգրիտ պատկերել առարկաների համաչափությունը, կառուցվածքը, տարածական դիրքը:
- Կկարողանան ճիշտ լուծել պատկերի կառուցման բովանդակությունը:

Մարտիրոս Սարյան

ՄԵԹՈԴՆԵՐ

Դասապրոցեսն արդյունավետ դարձնելու համար կարելի է կիրառել մի քանի մեթոդներ՝ **մտագրոհ, քառաբաժան** և այլն:

Դասապրոցեսի սկզբում մտագրոհի մեթոդը կիրառվում է մտքերի, գաղափարների, տեսակետների ազատ և անսահմանափակ արտահայտման համար: Այս մեթոդի

շնորհիվ վեր են հանվում սովորողների նախնական գիտելիքները, այն, ինչ նրանք գիտեն կամ ենթադրում են, որ գիտեն տվյալ թեմայի նյութի վերաբերյալ:



Դասի վերջում, որպես ամփոփում կարելի է կիրառել քառաբաժան մեթոդը: Այդ մեթոդով կբացահայտվի սովորողների ստացած գիտելիքների արդյունքը: Սովորողները կպատասխանեն ի՞նչ տեսան, ի՞նչ զգացին, ի՞նչ լսեցին, ի՞նչ հասկացան հարցերին: Բաժինների հանձնարարությունը պատակական չէ ընտրված, դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին:

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ իմացա
Ի՞նչ զգացի	Ի՞նչ եզրակացություն արեցի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ բնանկարչության ուսուցումը նպաստում է անձի համակողմանի զարգացմանն ու դաստիարակությանը: Փորձը ցույց է տալիս, որ էքսկուրսիաների, զբոսանքների, դիտարկումների արդյունքում զարգանում է սովորողների գեղագիտական ընկալումներն ու ճաշակը, ձևավորվում է գնահատանք, սեր, հոգատարություն բնության յուրաքանչյուր մասնիկի նկատմամբ: Դիտարկումները բնության գրկում՝ սովորողներին մղում է զգալ գույների բազմազանությունը, լույսի ու ստվերի առկայությունը, մեծ ու փոքրի կանոնը: Սովորողները ուսումնասիրելով հայ և արտասահմանյան նկարիչների ստեղծագործությունները՝ կհարստացնեն գեղարվեստական պատկերացումները: Կզարգանա մտապատկերման կարողությունը: Ստացած գիտելիքների հիման վրա սովորողները կպատկերեն թեմատիկ նկարներ, կոմպոզիցիաներ՝ պահպանելով համաչափության կանոնները, վերլուծություններ կիրականացնեն բնության փոփոխությունների, երևույթների, գույների, իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ: Օգտագործելով տարբեր մեթոդներ կզարգացնենք սովորողների դիտողականությունն ու երևակայությունը: Մտագրոհ մեթոդով կխթանենք սովորողների ստեղծագործական մտածողությունը, իսկ քառաբաժան մեթոդով կպարզենք և կամփոփենք սովորողների ունեցած և ձեռք բերված գիտելիքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բնանկար /https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%B6%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80
2. Ինպրեսիոնիզմ /https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%B4%D5%BA%D6%80%D5%A5%D5%BD%D5%AB%D5%B8%D5%B6%D5%AB%D5%A6%D5%B4
3. Մեթոդ /https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%BF%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D5%B0
4. Կերպարվեստ / ուսուցչի ձեռնարկ 5-7-րդ դասարան։
5. Հայկական խորհրդային հանրագիտարան։